ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՍ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՌՈՒԲԷՆ ՎԱՐԴԱՆԵԱՆ ՈՐ Ի ՄՈՍԿՈՒԱ, ՌԴ

Համայն հայութեան սրբութիւն սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնը, ջերմ սէրն ու գնահատանքն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանաւոր զաւակիդ:

Սիրելի պրն. Վարդանեան, Տիրոջ կամքով ճանաչելով Ձեզ՝ Մենք Ձեր մէջ զոհունակութեամբ տեսանք շնորհալի, հաւատաւոր, հայրենասէր ու եկեղեցասէր պատուարժան հայորդու: Ազնիւ աշխատանքով դէպի առաջ ուղիներ հարթելու Ձեր նպատակասլացութիւնը, որով կառուցում էք աստուածպարգեւ Ձեր կեանքը, առաջնորդել է Ձեզ գովարժան յաջողութիւնների: Ձեր գործունէութեամբ Դուք բարձր էք պահում մեր ժողովրդի անունը Ռուսաստանի Դաշնութիւնում:

Գոհունակութեամբ փառք ենք մատուցում Բարձրեալն Աստծուն այն գործերի ու նախաձեռնութիւնների համար, որ կեանքի էք կոչում Դուք՝ մեր ժողովրդի կեանքը առաւել բարօր ու բարգաւաճ դարձնելու նախանձախնդրութեամբ: Ձեզ գործակից հայորդեաց հետ միասին Դուք իրականացրեցիք «Տաթեւի վերածնունդ» նախագիծը՝ մեծ աւանդ բերելով հնամենի վանքի պայծառութեանը, նաեւ Հայաստանում զբոսաշրջութեան զարգացմանը: Գնահատարժան են նաեւ Հայրենիքում կրթական, մշակութային ու տնտեսական ծրագրերի իրականացման Ձեր նախաձեռնութիւնները, որ կոչուած են աշխարհի առաջատար փորձի կիրառումով նպաստելու մեր երկրի առաջընթացին:

Մենք սիրով հրաւիրեցինք Ձեզ անդամակցելու Գերագոյն Հոգեւոր Խորհրդին, որի կազմում Դուք աջակից էք Մայր Աթոռի առաքելութեանը՝ ի սպաս բերելով Ձեր ժամանակը, ջանքերն ու կարողութիւնները: Մեզ համար ուրախալի է, որ Ձեր մշտական աջակցութիւնն է վայելում Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի Հայոց թեմը՝ ռուսաստանաբնակ Մեր զաւակներին հոգեւոր սնունդ մատուցելու իր առաքելութեան մէջ: Այսօր ուրախ ենք անդարադառնալու, որ Դուք մեծագոյնս նուիրատութեամբ օժանդակութիւն էք բերել Տիրախնամ թեմի առաջնորդանիստ եկեղեցու եւ կից համալիրի կառուցմանը: Նորակառոյց սրբավայրը ռուսաստանաբնակ հայորդիներիդ հաւատքի ու ազգասիրութեան պանծալի վկայութիւնն է, որ պատիւ է բերում համայն մեր ժողովրդին:

Բարձր գնահատելով Ձեր վաստակը մեր Սուրբ Եկեղեցու եւ ժողովրդի կեանքում՝ Հայրապետական այսու Կոնդակով, սիրով ընդառաջ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստա-

նի Հայոց թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի խնդրանքին, շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Վստահ ենք, որ մեր Սուրբ Եկեղեցու եւ հարազատ ժողովրդի հանդէպ Ձեր որդիական զգացումները պիտի շարունակեն արդիւնաւորուել ապրուածահաճոյ նոր ձեռնարկներով:

Ի խորոց սրտի աղօթում ենք առ Բարին Աստուած, որ Իր Ամենախնամ Աջով հովանի լինի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ պարգեւելով քաջառողջ արեւշատութիւն, գործոց յաջողութիւններ եւ ամենայն բարիք:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ.
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 795